

Կ-1048-01.09.2016-ՏՀ-010/2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### Օ Ր Ե Ն Ք Ը

#### «ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-241-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասում «մաքսային ներկայացուցիչների» բառերից հետո լրացնել «,ինչպես նաև սույն օրենքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված այլ անձանց» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր բովանդակությամբ 6-րդ կետ՝

«6) մեկ փոխադրողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող, ընդհանուր մաքսային արժեքը 200 եվրոյին համարժեք գումարը չգերազանցող գումարի չափով ապրանքները:»

**Հոդված 3.** Ուժը կորցրած ձանաչել օրենքի 157-րդ հոդվածի 3-րդ մասը:

**Հոդված 4.** Օրենքի 158-րդ հոդվածի 8-րդ մասում լրացնել նոր պարբերություն՝

«Էլեկտրոնային եղանակով մաքսային հայտարարագրման իրականացման և մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում չունեցող անձանց կողմից մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգ մուտք գործելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եվ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմինների առարկությունների և առաջարկությունների

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	1	2	3	4
1.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	1. Նախագծի 1-ին հոդվածում նշված «հետեւյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «նոր» բառով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
2.	Հայաստանի Հանրապետության կառավարություն	2. Նախագծի 1-ին հոդվածով լրացում է կատարվում օրենքի 98-րդ հոդվածում, մինչդեռ Նախագծի 2-րդ հոդվածով կատարվող լրացումը վերաբերում է օրենքի 32-րդ հոդվածին: Այդ առումով Նախագծի 1-ին հոդվածով օրենքի 98-րդ հոդվածում կատարվող լրացումն անհրաժեշտ է նախատեսել Նախագծի 2-րդ հոդվածով, իսկ Նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 32-րդ հոդվածին վերաբերող լրացումը՝ Նախագծի 1-ին հոդվածում՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ իրավական ակտի կառուցվածքը պետք է լինի կուռ՝ տրամաբանորեն միասնական, հաջորդական ու համակարգված:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

3.		<p>3. Նախագծի 1-ին հոդվածում նշված «ՀՀ» հապավումն անհրաժեշտ է բացել` հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջները: Նույնը վերաբերում է նաև Նախագծի 4-րդ հոդվածին::</p>	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
4.		<p>4. Նախագծի 2-րդ հոդվածում նշված «1-ին կետում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին մասում» բառերով` հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն` Հայաստանի Հանրապետության օրենքների հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը` միայն համարակալված ենթակետերի: Նույնը վերաբերում է Նախագծի 3-րդ հոդվածում նշված «կետը» բառին:</p>	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն